


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը 2016 թվականի հունիսի 18-ից 24-ը կազմակերպում է դպրոցականների երրորդ համահայկական օլիմպիադան՝ ֆիզիկա, մաթեմատիկա, Հայաստանի աշխարհագրություն առարկաներից:

Օլիմպիադայի ընթացքում մասնակիցների եւ ուղեկցողների կեցության, սննդի եւ շրջապայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ծանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Մասնակցության հայտերը պետք է լրացնեն պատվիրակությունների (խմբերի) ղեկավարները եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն փոխանցեն մինչեւ 2016 թվականի հունիսի 19-ը ներառյալ: Իսկ մինչեւ հունիսի 10-ը հարկավոր է ուղարկել վերջնական հաստատում պատվիրակության կազմի եւ թվաքանակի վերաբերյալ՝ աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու նպատակով:

Ղեկավար(ներ)ն իրականացնում է(են) սաների նախապատրաստումը օլիմպիադային եւ պատասխանատու է(են) այլ ընթացիկ մասնագիտական խնդիրների համար պատվիրակության այցը Հայաստան նախապատրաստելու փուլում եւ Հայաստանում գտնվելու ընթացքում: Հաղորդակցման լեզուն հայերենն է:

Օլիմպիադայի անցկացման կարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, անհրաժեշտ նյութերը, ինչպես նաեւ մասնակցության հայտածելը տեղադրված են նաեւ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության պաշտոնական www.edu.am կայքէջում «Միջազգային կայքեր» բաժնի «Սփյուռքի հետ կապեր» ենթաբաժնում:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության:

հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
Էլ.փոստ. spyurq@yahoo.com, info@edu.am
Կայքէջ. www.edu.am

Օլիմպիադայի նպատակն է ազգային հենքի վրա համախմբել հայ երիտասարդներին, ներգրավել նաեւ հայերենին չտիրապետող երիտասարդներին համար իրականացվող ծրագրերում, խրախուսել բնագիտական առարկաների համընթաց հետաքրքրությունը, ինչպես նաեւ օժանդակել առողջ մրցակցության պայմաններում գիտելիքների ու ստեղծագործական կարողությունների դրսևորմանը, նպաստել առավել շնորհալի երիտասարդների հայտնաբերմանը Սփյուռքում եւ Հայաստանում:

Օլիմպիադային կարող են մասնակցել 14-ից 18 տարեկան պատանիներ եւ երիտասարդներ: Մրցություններն անցկացվելու են երկու տարիքային խմբերի համար՝ 14-15 եւ 16-18: Մասնակիցները կարող են լինել հայերեն ուսուցմամբ վարժարանների եւ կրթօջախների (այդ թվում՝ միօրյա) սաները, ինչպես նաեւ այլ դպրոցներ հաճախող հայ պատանիներ:

Օլիմպիադան ընդգրկում է հարցեր ֆիզիկայից, մաթեմատիկայից եւ Հայաստանի աշխարհագրությունից: Մասնակիցները կարող են հայտագրվել եւ մրցել կա'մ վերը նշված որեւէ առարկայական ոլորտում, կա'մ բոլոր առարկաների շրջանակում:

Օլիմպիադայի աշխատանքային լեզուն հայերենն է: Անհրաժեշտության դեպքում առաջադրանքներն օլիմպիադայի կազմակերպիչների կողմից կարող են ներկայացվել ռուսերեն եւ անգլերեն: Այլ լեզուների պարագայում՝ առաջադրանքների բարձրագույնում իրականացվում է պատվիրակության ղեկավարի կամ ուղեկցողի կողմից: Ֆիզիկայի օլիմպիադան անցկացվելու է երկու փուլով՝ տեսական ու փորձարարական: Մաթեմատիկայի եւ

Հայաստանի աշխարհագրության օլիմպիադաներն անցկացվելու է գրավոր եւ բանավոր փուլերով: Հաղթող են ճանաչվելու երկու փուլերում առավելագույն միավորները վաստակած մասնակիցները: Բնագիտական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են 1-ին կարգի 3, 2-րդի՝ 6 եւ 3-րդի՝ 9 դիպլոմներ եւ մրցանակներ: Տրվելու են նաեւ ՀՀ ԿԳՆ շնորհակալագրեր եւ պատվոգրեր:

Հայաստանում գտնվելու ընթացքում պատվիրակների համար նախատեսված են նաեւ տարաբնույթ մշակութային, ուսուցողական եւ ժամանցային միջոցառումներ:

Օլիմպիադային համահայկական բնույթ հաղորդելու համար հայցում եւ ակնկալում ենք հայկական համայնքների, ազգային-հասարակական հաստատությունների եւ կազմակերպությունների, թեմական եւ կրթական խորհուրդների հատուկ ուշադրությունն ու աջակցությունը: Ուրախ կլինենք բոլոր հայկական կրթօջախների ակտիվ մասնակցության համար:

Հանրավորության դեպքում՝ ցանկալի է օլիմպիադայի մասնակիցների միացյալ պատվիրակություն (խումբ) ձեւավորել ըստ երկրի կամ բնակավայրի՝ առավել բանիմաց թեկնածուների ընտրության եւ ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը համակարգելու համար: Պատվիրակությունը (խումբը) պետք է ունենա ղեկավար եւ մասնակիցների թվակազմի համեմատ ուղեկցող(ներ)՝ մինչեւ 10 պատանու համար 1 ուղեկցող համամասնությամբ: Պատվիրակության (խմբի) ղեկավարն իր նախընտրությամբ էրեւանում կարող է համալրել համապատասխան մրցութային հանձնաժողովի կազմը:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ԵՌԱԼԵԶՈՒ ՌԻՇԱԳՐԱՎ ԺՈՂՈՎԱԾՈՒ



Լինում են գրքեր, որոնք, անկախ իրենց պարունակած նյութից, արտաքին գեղեցիկ տեսքով ու ձեւավորմամբ ուշադրություն են գրավում եւ քեզ մղում ձեռքը վերցնելու ու ծանոթանալու նաեւ դրանց բովանդակությանը: Վերջերս իմ վաղեմի բարեկամներից մեկը, որ թրիլսիկ էր եկել, բերեց եւ ինձ նվիրեց սման մի շքեղ բանաստեղծությունների ժողովածու:

մից հանդես է եկել նման մի ժողովածուով: Գրքի բովանդակությունից ելնելով, կարող ենք ասել, որ հեղինակը դեռ վաղ հասակից իր սրտում ունեցել է բանաստեղծելու մի անթեղված կրակ, որը միշտ առկայծել է իրեն զգացնել է տվել ավելի ուշ, արդեն առաջացած տարիքում: Չէ՛ ինքն ասի, թե Ա.Գեւորգյանի գրքի բոլոր բանաստեղծություններն էլ հաջողված են: Իհարկե, այնտեղ կան մեծ թվով հայրենասիրական լավ ոտանավորներ, խրատական քառատողեր, ճանաչողական բնույթի գործեր եւ դրանց կողքին՝ նաեւ տողեր, որոնք, հաշվի առնելով առաջին գրքի հրապարակման հանգամանքը, մինչեւ վերջ «հղկված» չեն:

Սակայն, երբ մեր օրերում շրջապատում բարոյական շատ նորմեր ոտնահարվում ու մոռացության են մատնվում, մարդու հոգուց հանվում ու հեռացվում են գուրբ ու կարեկցանքը, խոհն ու խոկունը եւ նրան դարձնում սոսկ մի անզգայական էակ: Այս պարագայում մեր բանաստեղծի սույն ժողովածուն ձեռք է բերում չափազանց կարեւոր նշանակություն: Բանաստեղծի մտահոգություններից մեկը եւ ամենակարեւորը նրանց իրենց արմատների վրա ամուր պահելն է, հայեցի դաստիարակելը: Նման բովանդակությամբ բանաստեղծությունները մեծ թիվ են կազմում գրքում:

Հեղինակի մյուս մտահոգությունը մարդկանց մեջ ազնվությունն ու բարությունն սերմանելն է, եւ պատահական չէ, որ իր ժողովածուն նա հենց այդպես էլ կոչել է՝ «Լինենք ազնիվ ու բարի»: Այո՛, Ա.Գեւորգյանն ազնվության ու բարության բարոյից է: Նա նաեւ գովերգում է աշխատասիրությունն ու արդարությունը, հոգու մաքրությունն ու անկաշառությունը, ատում՝ սուտն ու կեղծիքը, քենն ու չար նախանձը, ազահությունն ու ընչաքաղցությունը:

Գրքում բազմաթիվ առակներ, քառյակներ ու բանաստեղծություններ կան նվիրված ծնողասիրությանը, հավատարմությանը, ընկերասիրությանը, աշխարհի խաղաղությանը ու ժողովուրդների բարեկամությանը:

Այսպես կարելի է դրվատանքի արժանի շատ բանաստեղծություններ վկայակոչել Ա.Գեւորգյանի ներկա գրքից: Բայց նշենք նաեւ, որ ժողովածուում տեղ են գտել մի շարք ստեղծագործություններ, որոնք կարելի էր եւ չտպագրել: Այդ առթիվ ճիշտ են ժողովածուի խմբագիր, Հայաստանի ծանաչված բանաստեղծ ու գրականագետ Վլադիմիր Մաղալյանի դիտողությունները, որոնք տեղ են գտել նրա հեղինակած բավականին ընդարձակ առաջաբա-

ԿՐԹԱՎԱՆ

ՎՐԱՅ ԼԵՉՎԻ ԴԱՍԵՆԹԱՅ՝ ՈՉ ՎՐԱՅԱԼԵԶՈՒ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՍԱՐ



Վրաստանի կրթության փոխնախարար Լիա Գիգաուրին եւ ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Գիորգի Մաչաբեիին ծանոթացան Քվեմո Զարթիլիում անցկացվող ոչ վրացական դպրոցների ուսուցիչների համար վրաց լեզվի դասավանդման գործընթացին:

Ինչպես տեղեկացրել է «Ուսուցչի տուն»-ը, ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների ոչ վրացական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում վրաց լեզվի դասավանդման գործընթացը մեկնարկել է փետրվարին եւ կշարունակվի առաջիկա վեց ամսվա ընթացքում: Դրան մասնակցում են Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Զարթիլիի եւ Կախեթիի տարածաշրջանների դպրոցների 738 մանկավարժներ: Այդ մանկավարժներից 290-ը դասընթացն անցնում են առաջին մակարդակով, իսկ 448-ը՝ երկրորդ:

330-ԻՆ ՏՐՎԵՑ ԱՎԱԳ ՌԻՍՈՒՑԶԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Դպրոցներում աշխատող 330 ուսուցիչները, ովքեր հաջողությամբ հանձնել են առարկայական քննությունը, ստացան ավագ ուսուցչի կարգավիճակ: Վրաստանի կրթության նախարարության տվյալներով, ուսուցիչների մասնագիտական կողմնորոշման եւ պաշտոնական առաջընթացի սխեման սկսեց գործել անցյալ տարվա սեպտեմբերից: Չնայած նրան, որ առաջին տարին պիլոտային էր եւ անցել է ընդամենը մեկ կիսամյակ, ուսուցիչների մասնակցությունը բավականին բարձր է: Անցումային փուլում ծրագրված էր պաշտոնական առաջընթաց այն ուսուցիչների համար, ովքեր կհանձնեին մասնագիտական նրբությունների թեստը: Սխեմայի ներդրումից հետո, նրանց կարգավիճակը, ովքեր հանձնել են քննությունը, հավասարեցվել է հավաստագրված ուսուցիչների կարգավիճակին եւ բաշխման փուլում նրանց տրվել է ավագ ուսուցչի կարգավիճակ: Այսօրվա դրությամբ, նման կարգավիճակ է տրվել 16339 ուսուցչի, հերթագրված է եւս 6200-ը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԿՐԱԿԻ ՊԱՐԱՐԵՅՄԱՆ ՀԱՄԱՉՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՀԱՎԱՆ ԶԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ագրեսիվ վերաբերմունքից, Ադրբեջանը մի քանի անգամ մեծացրել է իր ռազմական բյուջեն՝ ավելացնելով ռազմական հետադիմացությունը: Մենք համապատասխան կառույցներին ահազանգում էինք այն մասին, թե ինչի կարող է հանգեցնել այս ամենը: Մենք առաջարկել էինք ստեղծել շփման գծում միջա-

դեպերի հետաքննության մեխանիզմ, որպեսզի հնարավոր լիներ հստակորեն պարզել, թե որ կողմն է կոնֆլիկտային գործողությունների մախաձեռնողը»,- նշել է Հայաստանի նախագահը:

Սերժ Սարգսյանը պատահական չի համարում վերջին բախումից հետո կարճ ժամանակում կրակի դադարեցման շուրջ համաձայնության հաս-

տատումը: «Մենք չենք կարծում, որ ռազմական գործողությունները սկսվեցին անսպասելի կերպով: Դա սպասելի էր: Տեղի ունեցավ այն, ինչ պետք է տեղի ունենար: Սակայն կրակի դադարեցումը եւս պատահական չէր: Ադրբեջանական կողմը մեծ կորուստներ տվեց: Բացի այդ, Ռուսաստանի գլխավոր շտաբի պետը զանգահարեց հայկական ՋՈՒ գլխավոր շտաբի պե-

տին եւ տեղեկացրեց, որ ադրբեջանական կողմը համաձայն է այդ հարցով հայկական կողմի հետ հանդիպել Մոսկվայում: Բնականաբար, կար նաեւ համաշխարհային հանրության աջակցությունը: Շատ պետություններ եւ միջազգային կազմակերպություններ հանդես եկան համապատասխան հայտարարություններով»,- ընդգծել է Հայաստանի ղեկավարը:

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՏԵՐԸ ՎՅՅՅԵՆԵՆ ԳՈՐԾԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն առաջիկա օրերին կմեկնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի ընթացքում վեհափառ հայրապետներն իրենց գորակցությունը կհայտնեն հայ քաջ բանակին եւ Ղարաբաղի ժողովրդին:

ՍՕՅՈՒՌԵԸ ՀԱՅՐԵՆԻԵՐ ԿՈՂԵՐԵ Է

Ապրիլյան այս օրերին Սփյուռքի բոլոր կառույցները, ներկայացուցիչները, բոլոր մեր հայրենակիցները, իրագեկ լինելով Արցախում տեղի ունեցող իրադարձություններին, մեկ բռունցք դարձած՝ իրենց ամբողջական աջակցությունն ու գորակցությունն են հայտնում Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակին:

Այսօր Սփյուռքը, հավաքական ուժ դրսևորելով, իր հնարավոր բոլոր միջոցներն ի գործ է դնում, փաստելով, որ միշտ եղել է ու կմնա Հայրենիքի կողքին:

Սփյուռքի բոլոր կառույցները, ավանդական կուսակցությունները ամենապարբեր մակարակներով հրապարակում են Ադրբեջանի նախահարձակումը դատապարտող հայտարարություններ, փարբեր համայնքներում բողոքի շայն են բարձրացնում բնակության երկրների իշխանությունների առջև՝ սանջելու Բաքվի ռազմավարն ճկարումները:

Ձեռնածների հիշատակին հոգեհանգստի եւ գորակցության պարտազգ է մարտույվում Սփյուռքի հայկական եկեղեցիներում:

Մեր հայրենակիցները փարբեր միջոցներով աջակցելու պարտաստակամություն են հայտնում ընդհուպ մինչեւ ռազմաճակատ մեկնել: Այս բոլորը վկայում են հայի միասնական ոգու եւ Հայրենիքն ամեն ինչից վեր դասելու վճռականության մասին:

ՀՀ Սփյուռքի նախարարություն

ՄՈՍԿՎԱՆ ՀԱՄԱՆԱԽԱՎՈՐՆԵՐԻ ՇԵՏ ԱՐԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԻԻՈ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Իրանի եւ Ադրբեջանի իր գործընկերների հետ եռակողմ փարբեր լուրսներում համագործակցության հարցեր ըննարկելու համար 2 օր գարնվում էր Բաքվում: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ ունեցած հանդիպմանը ՌԴ ԱԳ նախարարը անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին: «Մենք առաջարկություններ ունենք, որոնք համանախագահների հետ համապետ չգտում ենք ակտիվորեն գործի դնել՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պայմանավորվածության հասնելու շահերից ելնելով»,- ասաց Սերգեյ Լավրովը:

ԱՊԵՎԱՎՈՐՄԵՆ ԵՆ ԿՈՇԵ ՈՒ ՀԱՍՅԵԱԿԱՆ ԶԱՅԵՐ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ապրիլի 7-ին ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (ՌԴ), Պիեռ Անդրիյոյին (Ֆրանսիա), Ջեյմս Ուորիքին (ԱՄՆ), ԵԱՀԿ գործող նախագահի անչնական ներկայացուցիչ, դեսպան Անջել Կասարչիկին: Հանդիպմանը ըննարկվել են վերջերս Ադրբեջանի կողմից սանչազերծված լայնածավալ ռազմական գործողություններին վերաբերող հարցեր: Բակո Սահակյանն ընդգծել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբից ակնկալում է կոշտ եւ հասցեական գնահատականներ ու քայլեր Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության կապակցությամբ:

ՀՐՈՒՍՊՈՐԵ ԿՐԿՐԵ ԽԱՍԵՏՎՈՐՄԵՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ ադրբեջանական կողմը շարունակում է խախտել չեռք բերված պայմանավորվածությունը կրակի դադարեցման վերաբերյալ, ինչի հետեւանքով հայկական կողմում կան նոր կորուստներ: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է, որ ապրիլի 7-ի լույս 8-ի գիշերը առավել ինտենսիվ խախտումներ են արձանագրվել շփման գոտու հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ, որոնց հետեւանքով զոհվել է մի զինծառայող, կան վիրավորներ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ԴԵՊԵՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՂԱՆԱԶԻ ՂԱՐԱԲՈՒ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 4-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ:

ԵԱՀԿ դեսպանների հետ հանդիպմանը Սերժ Սարգսյանը, մանրամասն խոսելով հակամարտության հարցով վերջին ժամանակների զարգացումների մասին, հայտարարեց, որ ինքը երեք ուղերձ ունի իրենց մայրաքաղաքներին հասցեագրելու համար: Ըստ Հայաստանի նախագահի, նախ Հայաստանը եւ տարածաշրջանային խաղաղությանը մտահոգ բոլոր կողմերից ակնկալում են ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ բացատրության հստակ պահանջ Բաքվից: Միաժամանակ, Հայաստանի նախագահի հավաստմամբ, մտահոգություններ արտահայտող ուղերձներ, խաղաղության հաստատման

կոչեր ու հայտարարություններ արդյունավետ չեն այնքան ժամանակ, քանի դեռ ուղղված չեն ռազմական գործողություններ իրահրած կոնկրետ հասցեատիրոջը եւ չեն նախատեսում հետեւանքներ դրանց անտեսման համար:

Երկրորդը, ըստ Հայաստանի նախագահի, ինքնորոշման իրավունքի համար պայքարող ժողովուրդների ճակատագրին վերաբերող հակամարտությունների դեպքում, անհրաժեշտ է վերացնել հակամարտության պատճառը եւ հետո միայն անցնել դրանից բխող բոլոր կարգավորումներին:

Հայաստանի նախագահի հավաստմամբ, ռազմական գործողությունների

միակողմանի դադարեցման մասին Ադրբեջանի հայտարարությունը ոչ այլ ինչ, եթե ոչ հերթական փորձն է միջազգային հանրությանը մոլորեցնելու եւ իր կողմից սանձազերծված ռազմական գործողությունները եւ դրանց հետագա շարունակությունը քողարկելու համար նախադրյալների ստեղծումը:

Նա նաեւ փաստեց, որ մարտական գործողությունների հետագա սաստկացումը կարող է հանգեցնել անկանխատեսելի եւ անդառնալի հետեւանքների՝ ընդհուպ մինչեւ լայնածավալ պատերազմի: «Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների շարունակվելու եւ լայնածավալ մասշտաբ ստանալու պարագայում Հայաստանը ճանաչելու է ԼՂ անկախությունը»,- հայտարարել է Հայաստանի նախագահը:

ԿԱՐԵՎՈՐՎԵՅ ԶԻՆԱՊԱՐԱՐԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵՒԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ապրիլի 6-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով գտնվում էր Գերմանիայում: Այցի շրջանակներում Հայաստանի ղեկավարը հանդիպում է ունեցել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսբազի նախագահ Սորբեր Լամմերթի, արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

մի ժամանակահատվածում, երբ Ադրբեջանի կողմից լրջագույն մարտահրավեր է նետված ԼՂ, ինչպես նաեւ ՀՀ անվտանգությանը, Հայաստանի նախագահը համագամորեն ներկայացրել է այս օրերին Ադրբեջանի կողմից զինադարձի խախտման եւ իրադրության աննախադեպ սրման պատճառով առաջացած լարված իրավիճակն ու վերջին զարգացումները:

«Այն, որ այս դժվարին պահին եւս այստեղ եմ, առավել քան խոսում է այն կարեւորության մասին, որ Հայաստանը վերապահում է երկկողմ հարաբերություններին, ինչպես նաեւ Գերմանիայի դերակատարությանը՝ որպես ԵԱՀԿ նախագահող երկիր»,- ասաց Սերժ Սարգսյանը:

Գերմանական կողմը վերահաստատել է իրավիճակի կապակցությամբ հակամարտության կողմերին արված իր կոչը՝ եւս մեկ անգամ ընդգծելով, որ ԼՂ հակամարտությունը չի կարող ունենալ ռազ-

մական լուծում, եւ կողմերը պետք է քաղաքական կամք ցուցաբերեն ու վերադառնան Մինսկի խմբի համանախագահների ձեւաչափով բանակցություններին: Հանդիպմանը երկուստեք կարեւորվել է զինադարձի խախտման դեպքերի հետաքննության մեխանիզմի ստեղծումը:

Բանակցությունների արդյունքներն ամփոփվեցին Սերժ Սարգսյանի եւ Անգելա Մերկելի համատեղ մամուլի ասուլիսում:



Հանդիպումներում քննարկվել են երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով հայ-գերմանական հարաբերությունների եւ բազմաբնույթ համագործակցության ընդգրկումն օրակարգը, անդրադարձել այդ հարաբերություններն առավել ամրապնդելու երկկողմ հետագա քայլերին:

Նշելով, որ իր այցը Գերմանիա կայանում է այնպիսի

«ՃԱՎԱԼԻ Է, ՈՐ ԽԱՊԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԻՐԱՐՎԵՅ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՎԱՍ ԶԵՆԵՐԸ»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը վերադառնալով Բեռլինից՝ ապրիլի 7-ի ուշ երեկոյան ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդևին:

Իր խոսքում վստահություն հայտնելով, որ սույն այցը հնարավորություն կընձեռնի երկկողմ քաղաքականության օրակարգի հարցերի լայն շրջանակի քննարկմանը, Հայաստանի նախագահը նշեց, որ, ցավոք, այցը կայանում է բարդ ժամանակաշրջանում: Ադրբեջանը հերթական անգամ փորձեց լուծել դարաբարայան խնդիրը ռազմական ճանապարհով: «Ձեռնարկվեց լայնամասշտաբ օպերացիա՝ Ադրբեջանի զինանոցում եղած սպառազինության ամբողջ սպեկտրի կիրառմամբ»,- նշեց Հայաստանի նախագահը եւ հավելեց, որ Հայաստանում լայն արձագանք ստացավ այն փաստը, որ ադրբեջանցիները ողջ ուժով կիրառեցին այն զինատեսակները, որ նրանք ձեռք են բերել վերջին ժամանակներում Ռուսաստանից: «Դա հասկանալի է, քանի որ Հա-

յաստանում ժողովրդական մակարդակով Ռուսաստանին համարում են մերձավոր դաշնակից ու բարեկամ: Այսօր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ մենք չենք բացառում հերթական սադրանքը եւ մենք որպես 1994 թվականի Չինադարձի համաձայնագրի մասնակից երկիր, չէինք կարող մի կողմ մնալ այդ ամենից»,- ասաց Սերժ Սարգսյանը եւ հավելեց, որ ԵԱՏՄ մասնակից երկրներից որոշ գործընկերներ իրաժարվել են գալ Երեւան՝ նախօրոք ծրագրված միջոցառմանը մասնակցելու նպատակով: «Ես չգիտեմ, դրանով նրանք որքանով օգնեցին Ադրբեջանին, բայց որ հաստատապես զցցեցին մեր կազմակերպության հեղինակությունը, դա միանշանակ է»,- ընդգծեց Սերժ Սարգսյանը:



Իր հերթին, ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևը Հայաստանի նախագահին տեղեկատվություն հաղորդեց երկկողմ բանակցությունների, ստորագրած փաստաթղթերի մասին եւ նշեց. «Ձեռն բաքցնի, իհարկե, կառավարական պատվիրակության համաձայնեցված պաշտոնական այցը եղավ շատ դժվար ժամանակահատվածում, բայց մենք ծրագրերը չփոխեցինք: Ինչ վերաբերում է Եվրասիական միության պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի միտի հետաձգմանը, ես հույս ունեմ, հավատացե՛ք, որ ամեն դեպքում, այստեղ ընդմիջում չի լինի»,- նշեց Դմիտրի Մեդվեդևը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

10.04.2016. Աշխարհամատրան կիրակի (Կանաչ կիրակի)

Հիսուս Քրիստոսի Հարության Սուրբ Ջատիկին հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կիրակի, ի հիշատակ երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: Այս եկեղեցին Սիոնի վերնատունն է համարվում, որտեղ Հիսուս Քրիստոսը հաստատեց Հաղորդության խորհուրդը: Աշխարհամատրան կիրակին կոչվում է նաև Կանաչ կիրակի, որն տոնի ժողովրդական անվա-



ԱՊՐԻԼ

նունն է, կապված բնության, գարնանային զարթոնքի հետ:

17.04.2016. Կարմիր կիրակի

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցում Սուրբ Ջատիկին հաջորդող կիրակիները հատուկ խորհրդանշական անվանումներ ունեն: Ջատիկի չորրորդ կիրակին կոչվում է Կարմիր: Կարմիրը Քրիստոսի եկեղեցու եւ հավատի համար մարտիրոսացած նահատակների սուրբ արյան խորհրդանշան է:

ՐԵՏԱՔՐԲԻՐ Է

ԻՆՉ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՆՐԱՔԿԵՆ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) մարտի 28-ին անցկացված միտում գրանցեց երկրում միասեռ ամուսնությունների հարցով հանրաքվեի անցկացումը:

Հարցը ներկայացվում է հետեւյալ կերպ. «Ցանկանո՞ւմ եք, արդյոք, որպեսզի Վրաստանում թույլ տրվի միեւնույն սեռի մարդկանց միջեւ ամուսնությունը»:

ԿԸՀ-ի տեղեկատվության մեջ, հանրաքվեին ներկայացրած վերոնշյալ հարցի նախաձեռնող խմբի կազմում են Չուրաբ Թոլորաիան, Գիորգի Ղորղանաշվիլին, Կախի Նիկաբաձեն, Բադրի Կվիրիկաշվիլին, Պետրե Գոգասաշվիլին, Թեյմուրազ Ցիսկարիշվիլին եւ Դավիթ Կուչալան:

Հատկանշական է, որ ԿԸՀ-ն չգրանցեց բաղադրությունների այլ հարցերը, որոնք ներկայացվել էին նախաձեռնողական տարբեր խմբերի կողմից:

Մասնավորապես, ԿԸՀ-ն հրաժարվեց հանրաքվեի համար գրանցել հետեւյալ հարցերը. 1.Արդյոք, համաձայն եք, որպեսզի վրացական բանակը ծառայի արտասահմանում:

2.Արդյոք, պե՞տք է զբաղվածությունը հայտարարել երկրի առաջնահերթային հիմնախնդիրը:

3.Համաձայն եք, որ Վրաստանի խորհրդա-

րանի կազմում լինի 61 անդամ:

4.Ընտրողին, պե՞տք է, որ վերապահվի իր կողմից ընտրված պաշտոնական անձին ետ կանչելու իրավունքը:

5.Ցանկանո՞ւմ եք, որ Վրաստանը հայտարարվի չեզոք երկիր:

6.Արդյոք, համաձայն եք, որ Վրաստանի խորհրդարանը տեղափոխվի Թբիլիսի:

7.Ցանկանո՞ւմ եք, որ դպրոցներում դասավանդվի «Ես եւ հասարակությունը» առարկան:

8.Արդյոք, համաձայն եք, որ կուսակցություններն ու քաղաքական կազմակերպություններն իրենց գործունեությունը դադարեցնեն հինգ տարի ժամկետով:

ՊՐՈՂՈՑ

ՂԱՍԱԳՐԵՐ ԵՎ ՆՈՒԹՐՈՒՔԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ՂԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԻՆ

Այս տարի էլ առաջին դասարանցիները որպես նվեր կստանան դասագրքեր եւ նուրբուքեր: Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության փոխնախարար Լիա Գիգաուրին, բացի համակարգիչներից, հանրային դպրոցի բոլոր առաջին դասարանցիները կստանան անվճար դասագրքեր:

«Դասագրքերով ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունը շարունակվում է»,- ընդգծեց փոխնախարարը եւ հավելեց, որ այս տարի հանրային, ինչպես նաև մասնավոր դպրոցներում, նախնական 49 հազար առաջին դասարանցի:



ՈՒՐԱՆԻՉԱՑԻԱ

«ԿԱՆԱՉ ՓՈՂՈՑ» ԹԲԻԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ



Թբիլիսիի պատմական մասի փողոցներից մեկը, Չվեթի Թբիլիսիի շրջանում գտնվող Կարգարեթեթի փողոցը շուտով «կկանաչի», ինչպես նաև կդառնա գերազանցակալից: Այդ մասին հայտարարեց Տեխնոլոգիական զարգացման հիմնադրամի ղեկավար Կախա Գվանցելաձեն:

«Կանաչ փողոց» փորձնական ծրագրի շրջանակներում ասֆալտը կկանաչի, իսկ նստարանները «կխելոքանան»: Այդ նստարաններին հանգստանալ կարելի կլինի նույնիսկ անձրեւից հետո՝ դրանք շուտ տալով դեպի չոր կողմը:

Այնտեղ նաև կտեղակայեն լիցքավորման սարքեր, ինչպես նաև փողոցային լուսավորում եւ ինովացիոն աղբամաններ (թափոնների մամլման սարքով), որոնք կաշխատեն արեգակնային էներգիայով:

«Բնակչությունը հնարավորություն կունենա լիցքավորելու ձեռքի հեռախոսները, լեկտրոֆոնները, իսկ չարջերը (լիցքավորման սարքը) կաշխատի արեգակնային էներգիայով... Նաև բանակցություններ են վարվում «Թելափ» ընկերության հետ՝ փողոցում էլեկտրամեքենաների լիցքավորման ապարատների տեղակայման համար»,- ասաց Գվանցելաձեն:

«Դա փոքրիկ փողոց է՝ շուրջ 230 մետր, սակայն նման նախագիծ հնարավոր կլինի իրականացնել այլ մեծ փողոցներում»,- նշել է Գվանցելաձեն: Հայեցակարգը մշակել է վրացա-գերմանական ընկերությունը, իսկ նախագծումն իրականացնում է Վրաստանի ընկերությունը:

ՖՈՒՏԲՈԼ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՎԱՐԿԱՆԻՇՇԱՅԻՆ ՆՈՐ ՍԱՆԴՂԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (FIFA) ներկայացրել է ֆուտբոլի դասակարգման ապրիլի աղյուսակը:

Համաձայն նոր սանդղակի Վրաստանի հավաքականը մեկ աստիճանի ետընթաց է գրանցել եւ ներկայումս հանգրվան էլ է 123-րդ տեղում: Իսկ Հայաստանի ազգային ընտրանին, ընդհակառակը, առաջադիմել է 6 հորիզոնականով եւ ներկայումս զբաղեցնում է 110-րդ տեղը:

Նոր վարկանիշային արդյունքներով, աշխարհի ուժեղագույն ֆուտբոլային հավաքականը Արգենտինայի թիմն է: Այն միավորների ոչ մեծ թվով գերազանցում է Բելգիայի հավաքականին, որը հանգրվանել է 2-րդ հորիզոնականում: Լավագույն ֆուտբոլային հավաքականների եռյակը եզրափակում է Չիլիի ազգային հավաքականը:



Table with 9 columns and 9 rows containing numbers 1 through 47, likely a calendar or grid.

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Հայաստանում: 6.Կետադրական նշան: 10.Պարզունակ աղեխորշավոր կենդանի: 11.Որսորդական շան տեսակ: 13.Թաղամթաթեավորների կարգին պատկանող միջատների ցեղ, որ ապրում է մեծ խմբերով: 14.Կազակների բնակավայր: 15.Ճանապարհները ծածկելու սեւ ձյութանման զանգված: 17.Արվեստի տեսակ: 18.Քաղաք Թուրքիայում: 21.Չգտման, տենչանքի առարկա: 25.Թթվահամ հատապտուղ: 26.Վրաց գեոմորֆոլոգ, աշխարհագետ ... Մարուաշվիլի: 27.Պարտքի դիմաց պահ տրվող արժեք: 28.Ուրիշի ստեղծագործությունն իր անունով ներկայացնող: 29.Պողպեթեղյան աստվածը փյունիկյան դիցարանում: 33.Բնածին մեծ շնորհք, ձիորք: 35.Իսպանիայի պառլամենտի անվանումը: 39.Ռուսական ժողովրդական պար: 40.Պետություն Աֆրիկայում: 42.Քնարական բնույթի երգ-երաժշտություն: 44.Պարկավոր արջ: 45.Ածխաթթվային բուժական հանքաջուր: 46.Էլեկտրական տատանումներ գոյացնող գեներատոր: 47.Երաժշտական ստեղծագործության կառուցվածքի ձև: ՈՒՂՈՆԱԿԱՆ. 1.Նկարագրող ձեռագործ գորգ:

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ. 1.Սահակ: 6.Օմար: 9.Աշխեն: 10.Երանակ: 12.Քնար: 13.Ծխամործ: 17.Ամենա: 20.Ատ: 21.Ալբանա: 24.Ասբերան: 26.Բկախտ: 27.Դպիր: 28.Դե: 29.Նար: 30.Արթուր: 31.Նրա: 33.Անահիտ: 35.Նամ: 36.Կապան: 39.Կարատ: 42.Յագոր: 43.Երե: 44.Մարգո: 45.Բու: 46.Ուն: 47.Դրոշ: 48.Ալ: 49.Ես: 50.Սիգ: 52.Ազդ: 55.Ով: 57.Են: 58.Յոլուլ: 59.Արամ: 60.Արին: 61.Սուլատ: ՈՒՂՈՆԱԿԱՆ. 2.Ազատ: 3.Առած: 4.Ուշիմ: 5.Տետր: 7.Մոնթե: 8.Պեպր: 11.Կխտար: 14.Ողբ: 15.Ճամբարակ: 16.Ոտքի: 18.ՄԱԿ: 19.Նեխտուր: 20.Ասպրան: 22.Լադա: 23.Անեթազ: 24.Ադանա: 25.Երշիկ: 29.Նանի: 31.Նարե: 32.Արտեմ: 34.Տայգա: 37.Պաղո: 38.Նոյյան: 40.Արուս: 41.Բաշի: 44.Մոսի: 47.Դունան: 49.Ելուստ: 51.Գորի: 53.Դիոլ: 54.Սեր: 56.Վան: 59.Ար:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Դեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» իրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445